# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ապրիլի 2012թվականի N 111-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 14/10 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ԿԱՌԼԵՆ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 15-ի թիվ 70 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի-սեփականությունը հանդիսացող Շահումյան փողոցի թիվ 14/10 հասցեի 18.0քմ հողամասում քաղ. Կառլեն Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 18.0քմ մակերեսով մառանի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 23032012-11-0022/՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շահումյան փողոցի թիվ 14/10 հասցեի մառանի օրինականացման վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոցի թիվ 14/10 հասցեի 18.0քմ հողամասում քաղ. Կառլեն Գալստյանի կողմից ինքնակամ կառուցված 18.0քմ մակերեսով մառանը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:

2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Կառլեն Գալստյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 168 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 2-ի թիվ 56 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Շամախյան փողոցի թիվ 168 հասցեի Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 1200.0քմ հողամասում քաղ. Լևոն Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 35.0քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 22032012-11-0037/՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շամախյան փողոցի թիվ 168 հասցեի անասնագոմի օրինականացման վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Շամախյան փողոցի թիվ 168 հասցեի 1200.0քմ հողամասում քաղ. Լևոն Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված 35.0քմ

մակերեսով անասնագոմը ճանաչել օրինական /հաշվարկված է արտաքին չափերով/:
2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Լևոն Մարտիրոսյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված զներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2012թվականի N 113-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 163.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ԵՎ 56.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԿՐԿՆԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 163.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի և 56.0 քմ ըմդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 163.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի և 56.0քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. 06.04-ի թի
----- որոշման

| Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմանափակումնե |
| 1 | Լոտ 7/ՔՀ-12/ | Մյասնիկյան 60/2 | 0274-0050 | 11.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի տաղավարի կառուցման | 27,500 | չկան |
| 2 | Լոտ 8/ՔՀ-12/ | Շահումյան 34/1 | 0249-0051 | 108.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի սրահի կառուցման | 270,000 | չկան |
| 5 | Լոտ 9/ՔՀ-12/ | Բարեկամության 1/3 | 0094-0058 | 20.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 50,000 | չկան |
| 6 | Լոտ 10/ՔՀ-12/ | Բարեկամության 1/4 | 0094-0058 | 24.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 60,000 | չկան |
| 3 | Լոտ 3/ՔՀ-12/ կրկնաճուրդ | Այգեստան 2/3 | 053-404 | 24.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 60,000 | չկան |
| 4 | Լոտ 4/ՔՀ-12/ կրկնաճուրդ | Այգեստան 2/4 | 053-405 | 32.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 80,000 | չկան |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա. Մարտիրոսյան*

«ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 30.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 30.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 13-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 30.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը ներկայացնել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. -------------------ի թիվ ---
որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 2/ՔԿ-12/ | Շահումյան 8/1 | 0242-0034 | 30.0 | Բնակավայրերի հող | ընդհանուր օգտագործման հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 30 տարի | 18000 դրամ | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2012թվականի N 115-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԻՎԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 41 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՍՆԱԳՈՄԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արմեն Նորիկի Պապյանը՝ Դիլիջանի Իվանովի փողոցին հարակից տարածքում գտնվող, իր սեփականությունը հանդիսացող անասնագոմի զբաղեցրած հողամասը իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ համաձայն անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի /սեփականության վկայական էիվ 2117437, տրված 2006թ. ապրիլի 12-ին/ նշված անասնագոմը հանդիսանում է քաղ. Արմեն Պապյանի սեփականությունը, որի զբաղեցրած 101.0քմ հողամասը տրամադրված է քաղաքացուն վարձակալության իրավունքով:
Հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին վերոհիշյալ անասնագոմի սպասարկման 101.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարել քաղ. Արմեն Պապյանին:
Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 209 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, 66 և 87 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Արմեն Պապյանին պատկանող անասնագոմին տրամադրել նոր հասցե՝ Իվանովի փողոց թիվ 41:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ապրիլի 2012թվականի N 116-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 054-021 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 054-021 ծածկագրով հողամասի մի մասի՝ 50.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 054-021 ծածկագրով հողամասի մի մասին՝ 50.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Այգեստան փողոց թիվ 17/3:
2. Նշված 50.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 054-021 ծածկագրով հողամասի մի մասի՝ 50.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 06
ք.Դիլիջան

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2012թվականի N 117-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 208-003 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 208-003 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1243.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 208-003 ծածկագրով հողամասի մի մասին՝ 1243.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Թբիլիսյան խճուղի թիվ 14/3:
2. Նշված 1243.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 208-003 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1243.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 13
ք.Դիլիջան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ապրիլի 2012թվականի N 118-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 241 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂ. ՍԵԴԱ ՊԱՊՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 241 շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերի 141-001 ծածկագրով հողում քաղ. Սեդա Բաբկենի Պապյանի կողմից կառուցված է ինքնակամ շինություն, մասնավորապես՝ 31.5քմ մակերեսով ավտոտնակ 31.5քմ նկուղով /հաշվարկված է արտաքին չափերով/ և 31.5քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Սեդա Բաբկենի Պապյանի կողմից ինքնակամ կառուցված շինությանը տալ նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 241/3:
2. Կալինինի 241/3 հասցեի ինքնակամ շինության նկատմամբ ճանաչել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ.ապրիլի 14
ք.Դիլիջան

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ջարուհի Ուլիխանյանը՝ իր սեփականությունը հանդիսացող, Դիլիջանի Կամարինի փողոցի թիվ 26 հասցեի 360.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Ջարուհի Ուլիխանյանին պատկանող, Կամարինի փողոցի թիվ 26 հասցեի 360.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Կամարինի փողոց թիվ 26/1:
2. Պարտավորեցնել քաղ. Ջարուհի Ուլիխանյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 16
ք.Դիլիջան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2012թվականի N 120-Ա

## ՔԱՂ. ՖԱՐԱՋ ԵՐԵՑՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 13-ի թիվ 64 որոշմամբ, 2012թ. ապրիլի 13-ին կառուցապատման իրավունքի մրցույթի էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» 800.0քմ հողամաս /ԼՈՏ-1(ՔԿ-12), Կալինինի փողոց 4-րդ նրբ. թիվ 9/4 /, 50 տարի ժամկետով, հասարակական սպասարկման օբյեկտի կառուցման նպատակով, 40000 դրամ տարեկան վճարի մեկնարկային գնով:
Կայացած մրցույթում 48000 դրամ տարեկան վճարի առավելագույն գնով հաղթեց Լիբանանի քաղաքացի Ֆարաջ Երեցյանը, որի մասին մրցութային հանձնաժողովի կողմից կազմվեց թիվ 1 արձանագրությունը:
Նշված հողամասը գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում, ըստ գործառնական նշանակության՝ հասարակական կառուցապատման:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76, 78, 80, 81 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի քաղաքապետարանի մրցութային հանձնաժողովի թիվ 1 արձանագրությունը և Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող, «Բնակավայրերի հողերից» /Կալինինի փողոցի 4-րդ նրբ. թիվ 9/4 հասցեի/ 800.0քմ հողամասը 50 տարի ժամկետով, կառուցապատման իրավունքով տրամադրել քաղ. Ֆարաջ Երեցյանին:
Հողամասի տարեկան վճար սահմանել մրցույթում առաջարկված առավելագույն գինը, այն է՝ 48000 դրամ:
2. Կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Ֆարաջ Երեցյանին.
1) Հողամասի կառուցապատումն իրականացնել Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված 13.03.2012թ. թիվ 1 (ՔԿ-12) ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2012թվականի N 121-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՄԱՐՏԻ 24-Ի ԹԻՎ 81 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 24-ի «ԴԻԼԻՋԱՆԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 81 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 24-ի «ԴԻԼԻՋԱՆԻ 26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 81 որոշման մեջ լրացնել քաղ. Նինա Մակարյանի հայրանունը՝ Թաղևոսի, ինչպես նաև հետևյալ նախադասությունը. «26 Կոմիսարների փողոցի թիվ 1/1 հասցեի բնակելի տան առաջին հարկի բաց պատշգամբի շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թ. մայիս ամիսը, առանց քաղաքաշինական նորմերի էական խախտումների, վերջինս համարել օրինական Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն » :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 17
ք.Դիլիջան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2012թվականի N 122-Ա

### ՀՈՎՍԵՓՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 81ՇԵՆՔԻ ԹԻՎ 23 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎԱՐՁԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՕՐԴԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Նելլի Սամվելի Թովմասյանը՝ հայտնելով , որ բնակվում է Հովսեփյան 81 շենքի թիվ 23 բնակարանում իր երկու երեխաների հետ, սակայն չունեն օրդեր: Ն. Թովմասյանը խնդրում է տալ միասնական օրդեր:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ն. Թովմասյանը իր ընտանիքի հետ բնակվում է Հովսեփյան 81/23 հասցեում, մուծում է կոմունալ վարձերը, սակայն չունի օրդեր: Բնակարանի կարիքավոր է:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37 հոդվածի 1-ին պարբերության 7-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հովսեփյան փողոցի 81 շենքի թիվ 23 երկու սենյականոց, 71.0 ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանի վարձակալ ճանաչել Նելլի Սամվելի Թովմասյանին և նրան հատկացնել միասնական օրդեր երեք անձի համար(ինքը, աղջիկը,տղան):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 17
ք.Դիլիջան

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի
հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 493.0 քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/ և տալ նոր ծածկագիր՝ 053-371: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման: Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի օգոստոսի 6-ի թիվ 901-Ն որոշմամբ, նշված հողամասը համայնքի «Գյուղատնտեսական նշանակության հողերի» կատեգորիայից փոխադրվել է «Բնակավայրերի հողերի» կատեգորիա: Դիլիջանի գլխավոր հատակագծով վերջինս ընդգրկված է բնակելի կառուցապատման գոտում:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 053-371 ծածկագրով, 493.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Սարալանջի փողոց IX նրբ. թիվ 18:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի հողերի կադաստրային քարտեզի 053-145 ծածկագրով հողամասի մի մասի՝ 053-371 նոր ծածկագրով, 493.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2012թվականի N 124-Ա

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող մի շարք անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք հայտ են ներկայացրել քաղաքապետարան՝ իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտերը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 հունվարի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
-Սվետլանա Մելքոնյան անհատ ձեռնարկատեր
-Լիլիթ Գինոյան անհատ ձեռնարկատեր
-Արմեն Վարշամյան անհատ ձեռնարկատեր

2. Բավարարել հայտը և տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 ապրիլի 2012թ-ից մինչև 31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար
-«Արտ Բրիջ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

3. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին. տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2012թվականի N 125-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 46 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. ապրիլի 18-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 46 հասցեի 1250.0քմ տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Արա Սերյոժայի Ասատրյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 1250.0քմ հողամասին կից փաստացի ավել օգտագործվում է 654.0քմ հողամաս, որից 300.0քմ հողամասի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Արա Ասատրյանը ձեռք է բերում սեփականության իրավունք: Մնացած 354.0քմ հողամասը ենթակա է վերադարձման համայնքի տնօրինության տակ /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Նշված 300.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 46 հասցեի տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 1550.0քմ մակերեսով, քաղ. Արա Սերյոժայի Ասատրյանի /ծնված՝ 12.06.1966թ./ սեփականության իրավունքով:
2. Շամախյան փողոցի թիվ 46 հասցեի տնամերձ հողամասի կազմում փաստացի ավել օգտագործվող 354.0քմ հողամասը օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում որպես «Բնակավայրերի հող», մասնավորապես՝ բնակելի

կառուցապատման:
3. Շամախյան փողոցի թիվ 46 հասցեի 1550.0քմ տնամերձ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Շամախյան փողոց թիվ 46/1:
4. Պարտավորեցնել Արա Ասատրյանին.
1) Իր տնամերձ հողամասի սահմանները համապատասխանեցնել հողամասի հաստատված հատակագծին:
2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 19
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2012թվականի N 126-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 350-003 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 350-003 ծածկագրով հողամասի մի մասի՝ 30.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 350-003 ծածկագրով հողամասի մի մասին՝ 30.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կամո փողոց թիվ 167/2:
2. Նշված 30.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 350-003 ծածկագրով հողամասի մի մասի՝ 30.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 19
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2012թվականի N 127-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 181/2 ՀԱՍՑԵՈՒՄ ՔԱՂ. ՀՐԱՀԱՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հոկտեմբերի 5-ի թիվ 583 որոշմամբ Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 181/2 հասցեի 32.9քմ հողամասում քաղ. Հրահատ Աշոտի Ստեփանյանի կողմից ինքնակամ կառուցված շինության, մասնավորապես, 18.3քմ նկուղով 32.9քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականության իրավունքը /սեփ. վկայական՝ թիվ 16042012-11-0047/՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 17-ի թիվ 731-Ն որոշման:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ վերոհիշյալ շինությունը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, համապատասխանում է գործող քաղաքաշինության կանոններին և սպասարկող հողամասը չի մտնում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի կազմում: Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 181/2 հասցեի նկուղով ավտոտնակի օրինականացման վերաբերյալ:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականություն հանդիսացող Կալինինի փողոցի թիվ 181/2 հասցեի 32.9քմ հողամասում քաղ. Հրահատ Ստեփանյանի կողմից ինքնակամ կառուցված 18.3քմ նկուղով 32.9քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվարկված են արտաքին չափերով/:

2. Գրավոր առաջարկություն ներկայացնել վերոհիշյալ ինքնակամ շինարարությունը իրականացրած քաղ. Հրահատ Ստեփանյանին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի 35 կետով առաջադրված գներով, նշված հողամասի և ինքնակամ շինության ձեռք բերման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 19
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2012թվականի N 128-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 96 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 30-ի «ՔԱՂ. ՄԱՐՈՒՍՅԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» թիվ 96 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մարտի 30-ի «ՔԱՂ. ՄԱՐՈՒՍՅԱ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2/2 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» թիվ 96 որոշման մեջ «բնակելի տուն» բառերից հետո լրացնել «և բնակելի նշանակության օժանդակ շինություններ»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ.ապրիլի 23
ք.Դիլիջան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2012թվականի N 129-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 30.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի թիվ 114 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 30.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու և մեկնարկային գինը սահմանելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, մակերեսով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գնով: Վերջինս հաստատվեց համայնքի ավագանու 2012թ. ապրիլի 10-ի թիվ 53 որոշմամբ:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2012 թվականի ապրիլի 24-ից հայտարարել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 30.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի մրցույթ՝ համաձայն կից աղյուսակի:
2. Մրցույթի օր նշանակել 2012 թվականի մայիսի 25-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի մրցութային հանձնաժողովին հանձնարարել.
1) սահմանել կառուցապատման իրավունքի մրցույթի պայմանները,
2) հողամասի մրցութային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքը»,
3) նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 23
ք.Դիլիջան

Դիլիջանի համայնքի ր

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 2/ՔԿ-12/ | Շահումյան 8/1 | 0242-0034 | 30.0 | Բնակավայրերի հող | ընդհանուր օգտագործման հողեր | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 30 տարի |

*Դիլիջանի համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* Ս

[illegible] 52.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԿՐԿՆԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի թիվ 113 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 163.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը աճուրդի և 52.0 քմ ըմդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը կրկնաճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով: Վերջիններս հաստատվեցին համայնքի ավագանու 2012թ. ապրիլի 10-ի թիվ 54 որոշմամբ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածների պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2012 թվականի ապրիլի 24-ից հայտարարել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 163.0քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերի աճուրդ և 52.0 քմ ըմդհանուր մակերեսով թվով 2 հողամասերի կրկնաճուրդ՝ համաձայն կից աղյուսակի:

2. Աճուրդի օր նշանակել 2012 թվականի մայիսի 24-ը:

3. Քաղաքապետարանի հողամասերի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել.

1) սահմանել աճուրդի պայմանները,

2) հողամասի աճուրդային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար «Ճարտարապետահատակագծային առաջադրանքները»,

3) նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ.ապրիլի 23
ք.Դիլիջան

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 23-ի թիվ 138

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի աճուրդ-վաճառք

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Մեկնարկային գին | Սահմա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 7/ՔՀ-12/ | Մյասնիկյան 60/2 | 0274-0050 | 11.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի տաղավարի կառուցման | 27,500 | |
| 2 | Լոտ 8/ՔՀ-12/ | Շահումյան 34/1 | 0249-0051 | 108.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | առևտրի սրահի կառուցման | 270,000 | |
| 5 | Լոտ 9/ՔՀ-12/ | Բարեկամության 1/3 | 0094-0058 | 20.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 50,000 | |
| 6 | Լոտ 10/ՔՀ-12/ | Բարեկամության 1/4 | 0094-0058 | 24.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | ավտոտնակի կառուցման | 60,000 | |
| 3 | Լոտ 3/ՔՀ-12/ կրկնաճուրդ | Այգեստան 2/3 | 053-404 | 24.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 60,000 | |
| 4 | Լոտ 4/ՔՀ-12/ կրկնաճուրդ | Այգեստան 2/4 | 053-405 | 32.0 | Բնակավայրերի հող | այլ հողեր | առևտրի տաղավարի կառուցման | 80,000 | |

*Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* [signature] *Ա. Մարտիրոսյան*

ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2012թվականի N 131-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 243/19 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԿԱՐԵՆ ԱՎԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Կարեն Ավանյանը՝ Կալինինի փողոցի թիվ 243/19 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապտման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Կալինինի փողոցի թիվ 243/19 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 20042012-11-0051/:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 243/19 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Կարեն Ավանյանին:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջանի համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կալինինի փողոցի թիվ 243/19 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Կարեն Ավանյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Կարեն Ավանյանին.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2012թվականի N 132-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 243/20 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԵՄԻԼ ԱՎԱՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Եմիլ Ավանյանը՝ Կալինինի փողոցի թիվ 243/20 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապտման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Կալինինի փողոցի թիվ 243/20 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 25042012-11-0004/:
Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 243/20 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Եմիլ Ավանյանին:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջանի համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կալինինի փողոցի թիվ 243/20 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Եմիլ Ավանյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Եմիլ Ավանյանին.

2) Ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել [illegible]
ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՄԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2012թվականի N 133-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ ԹԻՎ 103/4 ՀԱՍՑԵԻ 5850.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2729354, տրված 23.12.2011թ., Դիլիջանի Թբիլիսյան խճուղու թիվ 103 հասցեի ռեստորանը 5850.0քմ սպասարկման հողամասով պատկանում է քաղ. Հենրիկ Վաչագանի Մարտիրոսյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված ռեստորանի սպասարկման հողամասին կից, Թբիլիսյան խճուղի թիվ 103/4 հասցեի 5850.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված ռեստորանի սեփականատեր Հենրիկ Մարտիրոսյանին: Վերոգրյալ 5850.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված 5850.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 15022012-11-0006: Համայնքի ավագանին 2012թ. ապրիլի 6-ի թիվ 52 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 5850.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Հենրիկ Մարտիրոսյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Թբիլիսյան խճուղի թիվ 103 հասցեի ռեստորանի սպասարկման հողամասին կից գտնվող, Թբիլիսյան խճուղի թիվ 103/4 հասցեի 5850.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով

/ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Հենրիկ Մարտիրոսյանին: Հողամասի արժեքը կազմում է 7265700 դրամ:
2. Քաղաքացու հետ կնքել հողի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:
3. Պարտավորեցնել քաղ. Հենրիկ Մարտիրոսյանին.
1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 7265700 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:
2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2012թվականի N 134-Ա

### ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ԱՊՐԻԼԻ 6-Ի ԹԻՎ 107 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի «ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 141-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 107 որոշման և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. ապրիլի 6-ի «ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 141-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 107 որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ «հասարակական կառուցապատման հողերի» փոխարեն կարդալ «բնակելի կառուցապատման հողեր»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

# ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2012թվականի N 135-Ա

## ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 243/18 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԳԱԳԻԿ ԵՐԻՑՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գագիկ Երիցյանը՝ Կալինինի փողոցի թիվ 243/18 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Կալինինի փողոցի թիվ 243/18 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 25042012-11-0014/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 243/18 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գագիկ Երիցյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջանի համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Կալինինի փողոցի թիվ 243/18 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գագիկ Երիցյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:
4. Պարտավորեցնել քաղ. Գագիկ Երիցյանին.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ռիմա Նահապետյանը՝ իրեն հատկացված, «Շլորկուտ» հանդամասում գտնվող 498.0քմ այգեգործական հողամասին հասցե տրամադրելու խնդրանքով: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Ռիմա Նահապետյանին հատկացված, «Շլորկուտ» հանդամասում գտնվող 498.0քմ այգեգործական հողամասին տրամադրել հասցե՝ Այգեգործների փողոց 8-րդ փկղ. թիվ 11:
2. Պարտավորեցնել քաղ. Ռիմա Նահապետյանին.
«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 25
ք.Դիլիջան

ՈՐՈՇՈՒՄ

27 ապրիլի 2012թվականի N 137-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի «ՄԻ ՇԱՐՔ ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 265 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Էդգար Սիմոնյանը, խնդրելով Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 265 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Վալերիկ Սիմոնյանի» փոխարեն գրել «Վալերի Սիմոնյան», «Ռուզաննա Գուլինյանի» փոխարեն «Ռուզան Գուլինյան» և «Տախսա Միրաշկինայի » փոխարեն «Տախիա Սիմոնյան»:
Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 30-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 265 որոշման մեջ թյուրիմացաբար կատարվել են վերոհիշյալ սխալները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 30-ի թիվ 265որոշման 39-րդ կետում կատարել փոփոխություն՝ «Վալերիկ Սիմոնյանի» փոխարեն կարդալ «Վալերի Սիմոնյան», «Ռուզաննա Գուլինյանի» փոխարեն՝ «Ռուզան Գուլինյան» և «Տախսա Միրաշկինայի» փոխարեն՝ «Տախիա Սիմոնյան»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. ապրիլի 27
ք.Դիլիջան